

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Կազմակերպել բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների բժիշկների համար էլեկտրոնային առողջապահության ուսուցման դասընթացներ սույն թվականի հունիսի 18-ից.
 - 1) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ ԱԱԻ) տնօրեն Ալեքսանդր Բազարյանին՝ ԱԱԻ-ում դասընթացներ իրականացնելու համար, տրամադրել երեք դասասենյակ, որոնցից յուրաքանչյուրը կունենա՝ 20 (քսան) մասնակցի և 20 (քսան) համակարգիչ տեղակայելու հնարավորություն, ինտերնետ հասանելիություն այդ թվով համակարգիչների համար (ընդհանուր 5 մեգաբիթ ծավալով), պրոյեկտոր:
 - 2) Առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Արտյոմ Սմբատյանին՝ էլեկտրոնային առողջապահության ուսուցման դասընթացներ իրականացնելու համար ԱԱԻ-ին ժամանակավորապես տրամադրել 63 (վաթսուներեք) դյուրակիր

համակարգիչ (որոնք ձեռք են բերվել Գլխավ հիմնադրամի դրամաշնորհային միջոցներով ֆինանսավորվող «Հայաստանում տուբերկուլոզի դեմ պայքարի ուժեղացում» ծրագրի խնայողությունների հաշվին՝ երկրում էլեկտրոնային առողջապահության ներդրման աշխատանքներին աջակցելու նպատակով) և 60 (վաթսուն) քարտ ընթերցող սարք:

- 3) ԱԱԻ-ի տեղեկատվական և վերլուծական կենտրոնի էլեկտրոնային առողջապահության ներդրման բաժնի ղեկավար Ծաղկանուշ Սարգսյանին՝ կազմակերպել դասընթացների իրականացումը և հսկողությունը, ինչպես նաև առաջարկել Հայաստանի Հանրապետությունում դեղատնային գործունեություն ու բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների տնօրեններին՝ ապահովել բժշկական անձնակազմի մասնակցությունը էլեկտրոնային առողջապահության ուսուցման դասընթացներին:
2. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝ ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:
3. Սույն հրամանի հսկողությունը վերապահել առողջապահության նախարարի տեղակալ Անահիտ Ավանեսյանին:
4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐՄԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ